

թօմայէքի, աիիոն, և այլն, և այլն: — Անշուշտ զարգացուցիչ կամ զարթուցիչ ձեռաց ցնցմամբ և ուղղութեամբ կըրնայ կարնոյ քաղաքն շատ աւելի բարձրանալ, հարստանալ և յառաջադիմել ի քաղաքականութեան, և կատարել այն պարտքը կամ յոյսը, զոր վերին Տեսութիւնն թողուց իրեն, երբ մի առ մի ջնջեց իր առջեւն զԱրտաշատ,

Դուին, Արծն, Անի, Զուղա, որոց միայն աւերակներն կը մնան վկայ իրենց անցեալ մեծութեանը. իսկ կարին որ անոնց ոմանց կանգնիլը և ամենուն առինկնալը տեսաւ՝ դեռ կանգուն է, և մայրաքաղաքութեան պատիւը կը պահէ 1450 տարիէ:

Կըշարունակուի:

ԼԱՄԱՐԴԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԱՌ ԲԱՐԵԿԱՄՆ ԻՄ ՏԸ ՌԻԻՏԷՐ¹

Եւ տեսեր դու ըզնա ըզհուսկ վերջին մի նըւագ,
Խուլ, տրժգոյն, անկենդան, զուրկ 'ի շընչոյն, անբարբառ.
Եւ հիկէն նըկարիչ սիրողաբար ծըրադրէ
Ըզգիծս համօրէն գեղատեսիլ աւերաց,
Նըստեալ առ անկողնոյն, հանդէպ մեծի օրհասին,
Հաստատուն և վարժ գըրչաւ, ոչինչ հարեալ 'ի դողդոջ,
Սըրաթուի իբր ըզժամ, չե տակաւին բընութեան
Խանգարեալ զերեսացն ազնըւակերպ յօրինուած,
Առ մեղ ճեպեցեր դարձուցանել ըզնոսին,
Ըզպատկեր մի գոնեայ յափըշտակեալ յոչընչէն:
Թողեալ բիրտ արուեստին լուսանըկար պատկերի
Ըզգաղտնիս 'ի խաթարել համայն ըզմահ և ըզկեանս.
Դու ոչ զաստուծոյն անպատուեցեր ըզբազին,
Եւ ոչ աւերեցեր ըզգեղ անմահ քերդողին:

Ինքն ահա. միշտ գեղեցիկ. պերճապայծառ այն դիմաց
Ճըշգրիտ աւագիկ ծիրք, գիծք երեսաց վայելուչ,
Բայց և՛ ըս նըրբագոյն անօսրացեալք յօրհասէն:
Երևի նա չիջեալ խաղաղութեամբ՝ անաշխատ.
Տաղնապք երերականք դըժուարամահ վախճանի
Չեն եղծեալ ամենեւին ըզգեղ պայծառ իւր դիմաց.
Եւ հասեալ մեղմաբար մինչև 'ի շունչ իւր վերջին,
Նիրհեաց նա անշուշտ յերեկորին՝ զերդ մանուկ:
Հանգիստըն վեհագոյն և այն անդոյր խաղաղիկ
Նըկարին յայտանըկատ 'ի քո չըքնաղ պատկերիդ.
Յիշատակ սըրտառուչ, նըկարագիր հուսկ վերջին,
Ուր չգիտեմ որպիսի խաղաղութիւն և հանգիստ

¹ Պ. Տը Ռիւտէր՝ անմիջապէս Լամարգիւնի մեռնելէ ետև նկարած նշանաւոր ծրագիր մը 'ի ըլլա նըծայեց. այս ծրագիրը այնչափ աւելի յարգի է, որչափ որ հարկաւորապէս միակ ծրագիրն է և պիտի ըլլայ:

Ասեն մեզ եթէ կայր աստուածեղէնն եղեալ աջ
Յերեսն այն վըսեմ՝ և խորշումեալ 'ի տարեաց ,
Եւ թէ այրեն պատուական՝ որ ոչ գործեաց ինչ ըզչար ,
Ընկալաւ անձինն հանգոյն խաղաղ և քաղցրը վախճան :

Կայ նա այդր հանգուցեալ , գրլուխն 'ի վայր խոնարհեալ
ի սնարըս մահու , արտեանունք կորացեալ
Ձաջք՝ որ ոչ ըզլոյս արեգական տեսանէ ,
Կացեալ յանշարժութեան յաւիտենիցն քրնոյ :

Ձինչ , աւաղ , ազդէր 'ի քեզ , երբ անկողնոյն առննթեր
Ըզմտերմին՝ որ ոչ է , նըկարէիր ըզչըրթունս ,
Ըզյօնիցն կամար , և ըզբազուկսն և ըզլանջ
ի դիրս անգործութեան ըզկրտաւօքն երկայնեալս ,
Ձայդ երես պատկերագիր՝ գրծեալ 'ի ձև արծուական ,
Ձունչն վեհ և ուղղագիծ և զնուրբ անկիւնըս նորին ,
Ըզմարմին սիրողի՝ ուր այլ ոչինչ բաբախէր ,
Ձթելս հերաց , զոր ժամանակ ներկէր 'ի գոյն արծաթի ,
Ըզճակատ , գործանոց վառ , արուեստանոց լայնածիր ,
Ուստի տողք պանծալիք և պերճախօս ասացուածք
Հանգոյն սահանաց 'ի բարկ եռանդն հարելոց
Ելեալ ծաւալէին անհատապէս խաղացմամբ :

Ձերդ 'ի մայրս անտառի սատակչականն տապար
Ըզպեղեալս յարմատոց ըզհին կոճեղն արկանէ ,
Նոյնգունակ նըւաղին դապ ժամանակիս որերոյ .
Անկեալ տեսանէ դարս ըզմեծամեծս ետ զետէ .
Անտառ անմարդացեալ և 'ի զարդուցն ամայի .
Եւ մահն աւագիկ՝ ժըրավաստակ փայտահար ,
ի հողըն մահական ըզգրողն ըզլիձ տարածէ :
Յայնմ օրէ՝ յոր անկան Շադուպրիան և Պալզաք ,
ի նախծիրըն սոսկալի՝ բազուկ նորին պատաղեալ ,
Ձէր տըւեալ ամենեւին հանգոյն հարուած տապարի :
Լամարդին . գիտէաք զի միտքն էին մըթագնեալ .
Այլ գողցես իմըն կամաւ 'ի յապաղմանն երկարեալ
Կեալ նմա թոյլ տայր երկին , վարանելով եղծանել
Ըզճարտարըն գերապանծ զոր այլ հաստել չըկարէ :
Եւ զի արդ մեռաւ այժմիկ և հատաւ յոյս 'ի միջոյ ,
Մեծարեն ըզնա մարդիկ . ըզգան զպարապըն թողեալ
ի վըսեմ և 'ի պայծառ լուսաճաճանչ պատկերէն .
Ըզթեւ իւր չափեն և զանջըրպետ իւր դիտեն .
Ձերդ կաղնի պատեալ 'ի լու և մած 'ի բոյս սոսընձոյ ,
Կըրկին երևի մեծ՝ յորժամ անկեալ կայ տապալ :

Որպիսի մարդ . որ ըսկըսուած . տիւ՝ որոյ չիք արչալոյս .
Շանթ անհուն կայծական որ դեռ թընդայ տակաւին .
Անդէն երևի յիւր բովանդակ մեծութեան .
Ոչ մի խարխափանք , սահմանեալ ժամ՝ կամ դեգեր ,

Այլ լրացեալ հրաշակերտ, գաշնակութիւն պանծալի,
Եւ յայտնի գերազօր կարողութիւն հանճարոյ:

Ո՛վ չգիտէ. յամին հազար և ութ հարիւր և քրսան
Ի լոյս ծագեցաւ հանճարն համայն երկնային.
Թուական նըշանաւոր և փառաւոր ժամանակ.
Ի՛ր չըքնաղ, 'ի մէն մի թռիչ՝ 'ի կատար անդր հասանել.
Ինքնածին էր չափ տաղից 'ի յաջողակն այն 'ի միտս.
Եւ բնաւ ինչ՝ անունն անգամ, նախուստ ընտրեալ երևէր:
Տաղք երգոցն քաղցրալուրճ զուշ բոլորից գրաւէին,
Եւ 'ի փառս իւր մըտանէր ազատաքայլ ընթացիւք.
Անանուն աւուրք յառաջ և զուրկ ճակատն 'ի լուսոյ,
Ի վաղիւն՝ հրոշականուն և հաւասար Պայրընի:

Մեծի պարտութեանն հասեալ էր օր վաղորդեան.
Բարբառն գիւթական՝ ըզսուգն 'ի տօն փոխարկեալ,
Հանդարտեալ և ըսփոփեալ ըզհամայնից հեծութիւն,
Հարուածոյն վաղերւոյի իբր հատուցումն ինչ թըւէր.
Նըւագ սրովբէական, յուսոյն անդրէն արծարծիչ,
Եւ վըսեմ անդրադարձ տառապանացն Գաղղիոյ:

Աստուած, որ պարգեւօքն ըզնա լըցոյց լիովին,
Առ նորա յաղթանակին հաստատութիւն ապահով,
Ի պարգևըս բախտին՝ ըզբընութեանն իսկ յաւել:
Պատանի, վայելուչ, նըշանաւոր, բարձրագեղ,
Պերճախօս, վըստահ յանձին ըստ յաղթողացն օրինի,
Փարթամ, քաջանուն, քաջանշան և՛ս 'ի սրբոյ,
Պատուական և սիրելի բնաւից, արանց և կանանց,
Նըւագս երգարանեալ որովք ոգիք գերէին:

Ճոխացեալ ազնուագոյն կարողութեամբք 'ի յերկնէ,
Հանգոյն Ռափայէլի տածեալ ըզսէր գեղեցկին,
Էր գործի չըքնաղագիւտ և նուիրականն քընար,
Զոր յօրինողն աստուածեղէն՝ արարչագործ զօրութիւն,
Զերդ ճարտար սընգագործ, սիրող իւրումն արուեստի,
Երկրեալ յարդարէ առանձնաբար խընամովք:

Ո՛ր մատունք, որ մըրմունջք երեսական սըղոխից.
Ո՛ր ձայնք գաշնակի և էղեան կիթառաց.
Ամենայն ինչ հընչէր 'ի յոգնաձայնն երգեհոն.
Գեղգեղանք թաքուն բունկան որ 'ի մայրեաց երգէ խորս,
Դայլայլիկ սոխակին 'ի հիւսքանչ այն գիշերս՝
Զորս լուսին գունագեղէ արծաթափայլ նըշուլիւք.
Ողբաձայն դռնչիւն պըրտուեաց և հասկաց վէտ վէտ ծածան,
Որք կոծեալ 'ի թևոց հողմոց, մըրմունջս արձակեն.
Սարսուսէր կաղամախին գաշնակաւոր սօսափիւն.
Հըծծիւն խառնիխուռն շըշընջման տերևոց,
Հանգոյն գաշըն բարբառոյ, զոր մարդն անկեալ ըզբընով

Ի ցընորս երազոյ թերակատար կակաղէ .
Դողտր հառաչք հաւփալի որ արկանէ ըզվուլուս .
Դողդոջ նուագաւոր յորդախաղաց վրտակին .
Որոտք կայծական, ժըխոր ծովուն անդընդոց ,
Շըշունջ ճանճենոյ և օգապար միջատին .
Ձայն ծըղրիդին թաքուցելոյ ժըխահանին 'ի ճեղքուած .
Ձանգակ տըրտմահաղորդ , և հովուականն սըրինդ ,
Ձայնք երկնից , անտառաց , ալեաց , լերանց և դաշտաց ,
Պերճք , առատք , գորովալիցք , խանդաղակաթք , սըրտառուչք :

Ո՛ր բարբառ եռանդնալից , գեղանրկար , գիւրընթաց ,
Լի վանգիւք քաղցրագեղ և նմանական հեշտ ձայնիւք :
Յանուանի երգողաց՝ զորոց ըզտաղս յեղյեղեմք ,
Ոչ ոք այնպէս ազդեցոյց ըզնրւագաց քաղցրութիւն ,
Եւ անլուրն այն արուեստ , յաիրշտակիչ չափ տաղից ,
Աչաց ըզբօսանք և զուարճութիւն լըսելեաց ,
Երեւի բընաւ չունել արուեստական ինչ յինքեան ,
Եւ բըղիսել յականէն իբրեւ ըզգետ մեղրահոս :
Է ձայն երկնային որ թափ անցեալ և գերէ .
Մեղեդի , և հընչումըն բարբառոյ՝ յոր Ռասին
Երբեք ոչ հաւասարեաց , համայն Ռասին իսկ գողով .
Գըզուանք ասացածոյ , համակ սիրուն և ախորժ ,
Ուր չիք ձայն ամենեկին աշխատութեամբ յարդարեալ ,
Ուր ինքնին անմըտադիր անհոգութեան են չընորհք .
Ազդումն ըզբանչելի , քան զոր չիք սերտ ընտրութիւն :
Ընդ մատամբք իւրովք բառք դասաւորին ինքնաբար ,
Համբոյրք , ախորժալուրք , գողտրաբարբառք . յայնժամ միտք
Ճօճեալ մեղմաշարժ 'ի փետրալիցդ անկողին ,
Վայելէ անպատումն և անըսպառ հաճութեամբ ,
Իւ յերգոց Պեղինեայ ըզգայութիւնքս արբենան :
Յալեաց կամ 'ի հողմոց ոք կարծէ զանձն որորեալ :

Ոչ ըզտոգսըն կռանէ յոլովագոյն նըւագօք
Ի կերտել ըզպողովատ կամ ըզմետաղ կարծրակուռ .
Շողին թանձրատեսիլ , տեսանելեաց չացուցիչ :
Ի համբոյր և հեզաշարժ և 'ի փափուկ բանիցն ոճ
Գոյ սիրուն ինչ այնպիսի , յոր ալն հանգչի հաճութեամբ ,
Ջերդ հանգչի 'ի չըքնաղ ականակիտ ինչ վրտակ
Կամ 'ի բամբակ ձինակերպիկ կապուտակին երանգոց :

Լայն բանիցըն չըրջան , հոգւոյն զեղումն յորդառատ ,
Է հանգոյն ծրփանաց և ծաւալման կոհակին ,
Երբ հասեալ 'ի խորոց երեւագին տատանմամբ՝
Գազաթն իւր փըրփրագէզ ուռնու 'ի ծալս ահագինս .
Ոտք գայթեմն . ուժգնագոյն ալիք ալեաց յաջորդեն ,
Եւ փլուզեալ՝ յաիրշտակեն ըզքեզ յիւրեանցըն կատար .
Եւ հեռուստ ընդ կապոյտ դաշտս՝ ոչ տեսանեն ինչ այլ աչք
Բայց ամբոխս անըսպառս անչափելի մըկանանց :

Տըւեալ լամարդին առ Գաղղիացիս ըզժոտէն ,
Լսպան ըզԲառնեայ զապերասան ըզմուսայն :
Երբ երգեաց նա միանգամ , վորդեռական երգոց տողք
Յընդեցան նըշաւակեալ , 'ի չիք դարձան բընալինջ :
Վասն ըզնա զանգելոյ՝ երկնից ընտրեալ էր ըզկաւ
Իւ ըզՄիլտոնս և ըզԴասոս և ըզՎիրգիլս յարդարէ :
Եւ զի այժմ ոչ ևս է նա , քաջ իսկ կարեմք արդ ասել
Ձի ոչ որ 'ի դարուցն հոլովելոց հըսկայից ,
Ոչ Մովսէս և ոչ Յովբ , իւր նախահաւըն քերդող ,
Ոչ Դաւիթ սաղմոսանուագ , տեսանողացն ազգմամբ լի ,
Ոչ Պինդար , քնարերգուացն եբրայեցւոց մօտաւոր ,
Ոչ Տիբուլ , գորովալից 'ի սիրային իւր 'ի տաղս ,
Ոչ Պետրարդ , սոխակն անոյշ ըզմայլական առ 'ի լուր ,
Ոչ Բապթալ , 'ի յանդունդ երկբայութեանըն լուղորդ ,
Ոչ Փեննելոն , սպիտակ փետրովք պըճնեալ կարապ գեղազարդ ,
Ոյր արձակ բանքըն ծաւալին իբրեւ զալիս դիւրընթաց .
Ոչ Պոսիւէ սաւառնաթեւ , որոյ չիք այլ օրինակ
Բայց արծիւն՝ որ մեծայաղթ թեւօքն յերկինքս ճախրէ .
Ոչ Պիւֆոն , որ նկատէ զաշխարհ յիւրում մեծութեան .
Ոչ Ռուսոյ , ոչ Սէն Բիէռ , միտք հանճարոյ պաշտելի ,
Որ գեղով քաղցրութեան ըզՎիրգիլինն զարդարեաց ,
Ոչ որ յայսմ 'ի դարուս , ոչ յապառնի ժամանակս
Անցանել կարասցէ քան ըզճակատն այն 'ի վեր :

Ջերդ երկրորդ իմն Ովկիան վաստակք գործոցըն պարզին ,
Անսահման , պերճապայծառ , յոր ընկլուզեալ կորընչիմք :
Քաջատես ամենայնի , գեղազարդէր զամենայն .
Եւ անշուշտ ըզնա հաստեալ էր Աստուծոյ , զի լիցի
Իւրումն արարչութեան ցոլացուցիչ կամ նկարիչ :
Ջերկնիցն ըզգըմբէթ , ըզկապոյտն յարկ , զկամար մեծ ,
Ըզծովն համատարածս աստեղատանց հեռաձիգ ,
Որք զիւրեանց փողփողմունս հասուցանեն մինչ առ մեզ .
Ջանսահման տարածութիւն , դռնչեցուցիչ անդունդ խոր ,
Ուր պարզէ մեզ գիշեր ըզպերճազարդ տեսարան ,
Տարածեալ 'ի վերոյ երկրի 'ի քուն նիրհելոյ
Ըզլայն դաշտ կապուտակ՝ ծածկեալ փոշով ոսկեհատ .
Գունդք կուտակադէզք և աստեղաց շեղջակոյտք
Որք զամայսըն լընուն և ցիր ըզքօղսըն ծածկեն :
Գըզրոց անըսպառ ադամանդեայ աշխարհաց ,
Ոյր գողգոջ ճաճանչք 'ի ծոց հաստատութեան նըշողեն .
Ըզմահիկ լուսնակին կըրկին ծայրիւք նըրբենի ,
Ջանիւ իւր լի , թաւալելով զամպոց ըզմանըր փետրովք ,
Կամ 'ի մութ ոլորտից տակաւ 'ի դուրս երևեալ
'ի պատել զամենայն 'ի շղաշատեռ արծաթի .
Ջարեւ , զակն Աստուծոյ , եւ բնաւք թըւին դալ 'ի լոյս .
Ըզբոսոր արեւմտից , զարշալուսոյն ճերմակ դէմն .
Ջերփներանգ ծիածան , շոգիամէզ , ինքնածին ,
Ըզմեզք շուրջ զօդեղէնն հատուածակողմ բոլորեալ .

Ըզծով, միշտ առոյգ յարքայութեանն ջրեղէն,
Ուռուցեալ և ցածուցեալ որպէս ըզծոց որ շրնչէ,
Մերթ յալիս իւր թափանցիկ, ակնակիտ և հանդարտ
Ըզկապոյտ ցոլացուցեալ ըզհարազատ եթերի,
Եւ մերթ 'ի շանթ փայլատականց և 'ի պրտոյտսն հրաբոց
Յանդունդ կապուտակ զալեաց կոհական ընդհարեալ .
Ըզսարս ապալերս, ըզսօս կատարըս բարձանց,
Ջրսպիտակս 'ի ձեանց լերինս կամ արջնաթոյրս յեղենեաց .
Ջափափայս, զահեղ կամուրջս յոր ըզգուշեալ որ գընայ,
Ոյց կախեալ կայ կամար գահաւանդիցն ըզվախիւք .
Եւ անտի որ տեսանէ իւրով վըսեմ շառաւմամբ՝
Ի յոյզ սասանութեան մըշտատատան աղմըկի
Ըզսահանս արագընթաց, որոտագոչ, ծըխամած,
Յանդունդըս տապալեալ սիւնատեսիլ՝ փրփրադէզ .
Ջառուակ զովագին, ըստ բնիկ լերին ելեալ կողս,
Ընդ դալար թաւալելով բիւրեղանման վըտակօք .
Ջաղօրիս և զկանաչ տախտակամածն իւր անիւ,
Ուստի ջուրք հոսեալ ծաւալ՝ վըտականան ոսկեհատ .
Ըզլիճըս լռասէրս և հանդարտեալս, և զպատկեր
Ջուարճալից դաշտավայրի նըկարելոյ յերես ջուրց .
Ըզգետ, ժապաւէն կակուղ՝ 'ի փայլ պաղպաջուն,
Որ 'ի ծով խուսափէ ընդ ճանապարհ ծամածուռ,
Թափառի ընդ դաշտավայր յերկայն դալարս օձաձև,
Եւ ցոլմամբն 'ի բացեայ 'ի յայտ եկեալ երեւի .
Ջանապատն 'ի կիր փոխեալ արեգակամբք կիղանուտ,
Ովկիան աւազասոյզ, ակօսածև խարխարեալ,
Ծարաւոյ արքայութիւն և ցամաքուտ երաշտի .
Մեծ 'ի լըռութեանն և հոլանի մերկութեան .
Ջաւերակն, ուր տեսանէ որ ըզխոտոց խամրեալ փունջ
Կախեալ իբր ըզմօրուս յորմոց 'ի ծերպըս ճեղքեալս .
Ըզծոպս, ըզգրասանգս, զօղս հիւսուածոյս, ըզմանեակս
Յեռեալըս բաղեղամբ ընդ պարըսպաց հին կատարս .
Ըզհասկ քըստմնածածան, ըզվարդ յոր ջինջ ցոլանայ
Արկեայն յԱրշալուսոյ խոնաւակերտ անդամանդ .
Ըզտունկըն ջրասէր՝ հերովք վարսից կակղուղէշ,
Որ ընդ ծալըս մկանանց գընայ յընթացսն մեղմիկ .
Ջուղէշըս լալագինս ամայական ուռենեաց .
Ըզշուշան, զայծատերև յանուշաբոյր պըճնեալ փողս .
Ջեղինս, որք երեկոյն խոնջեալք և ուրն 'ի խոնարհ
Այսրէն յետըս դառնան ձըգեալ ըզխոփըն տապալ .
Ըզմողէզ ծամածուռ և ըզմիջատըն մանրիկ .
Ըզճանճն որ նեկտարաւ գիւր ըզբըջիջըն լընու .
Ջեղն՝ իւրով եղնորթու, և ըզնըթոյգն ամեհի,
Որ ըզսանձ պողովատիկ 'ի ձեանց փրփուր ներկանէ .
Ջարծիւն՝ աչօք կայծակնացայտ, որ յանյողդողդ թևոց թիւ
Հատանէ զկապոյտ դաշտին զանծայրածիր անապատ .
Ըզսիրամարգ, գեղեցկութեամբն եղեալ թըռչնոց թագաւոր .
Ըզկարապ զարմանապանչ, որ զերեսօք ջուրց լիւղայ .

Ձամենայն զոր բոլորդ այդ ահաւոր և չքքեղ՝
ի կնոջ ցրմեղու և ՚ի մայրւոյն մինչ ցրխոտ՝
Պարփակէ ինչ գեղեցիկ և մեծ և քաղցր և սիրուն ,
Նըկարէ զայն Լամարդին ՚ի նուագ տաղից հեշտալուր :

Ըզդրոշմն Աստուծոյ ընդ բնաւս ակամբն ընթեռնոյր ,
Յընդարձակ բընութեան ըզնա խընդրեալ անդադար ,
ի յաղթ արեգակունս և ՚ի միջատն իսկ ինքնին ,
Եւ միշտ պատասխանէր յաւերժականն , Ահա ես :

Ահ թէ սիրտն ունիցի երբեք ըզպէտոս ասելոյ
Թէ ՚ի զրաւ կենաց մարդոյ չըվախճանի ամենայն .
Եթէ պէտք իցեն նրմա անմահութեանն հաւատալ ,
Եւ յուսալ եթէ ձեռն աստուածեղէն էութեան
Հոգւոյ վերածնելոյ բանայ նորոգ օթեան ,
Հանճարեղ մարդոյն դադաղ հանդէպ ցուցցէ զայն նրմա :
Եւ զիարդ իցէ խորհել զի ՚ի միում իսկ աւուր
Այդպիսի կարողութիւնք շիջանիցին մինչ իսպառ :
Ձայդ ոչ ընդունէր վրսեմախոհն այն քերդոդ ,
Արքայն անկեալ , որ ՚ի խորոց հողազանգուածս անդընդոց
Ձրկտէր ՚ի մրտաւորն և յաննիւթիցն էութիւն ,
Տարազիր հրեշտակապետ , երկնից սիրով խանդակաթ :

Երեւի թախիծն ՚ի նմա , քաղցրայարմար իւր նըւագք
Են յաճախ արտասուալիցք , միշտ տըխրազգածք և ծանունք .
Գանդի էր նա , աւանդ , մի ՚ի վեհանձըն սըրտից ,
Որք ըզմասըն ցաւագին զամենայնի ըմբռնեն
Եւ ոչ սընոտի կերպարանօքըն պատրին :
Նեղութիւնք , անյուսութիւն և արտասուք առ նոսա
Են կեանքն իսկ ինքնին և իրապէսն իսկութիւն :
Դատապարտ առնէր ըզծաղր և ըզնորայն չարութիւն .
Ըզխայթոց վերտառութեան թողոյր արանց վատթարաց .
Հաւատայր յուղղութիւն և բարձր առնէր զկանանց ազգ .
Խորշէր ՚ի ծաղրելոյ . գիտէր զի բան մի հենգնոջ
Ի երբեմն իբր ըզդաշոյն որ զմարդ ՚ի սիրտ իւր խոցէ :
Էր նա մեծ ՚ի պարզութեանն և սիրելի հանճարով .
Դիւրամէտ ՚ի գորով , անհեռ , առանց այպանաց .
Բընաւ ոչ ըզթունալից ապականեաց ըզքարտէս
Բանիւ հեգնութեան , տըմարդութեան կամ քինու :

Ձանենգն յայսմ ՚ի դարուս , ըզհոգին ջինջ և մաքուր
Մեր վատթար յոռութիւնքս էին թողեալ անարատ :
Էր ներող անյիշաչար , արգահատող և բարի .
Ձի յաճախ քաղցրութիւն ընդ զօրութեան է կըցորդ :
Սիրէր զընտանիս , ըզնախահարցըն կենցաղ ,
Ըզքաղցըր խառնումն երկուց ձեռաց մըտերմաց ,
Ձայր կացեալ հաւատարիմ ՚ի բնակակիրն իւր ազգմունս ,
Ձըստ գըրոց սըրբոց որեար և զժամանակս առաջնոց :

վըշտացեալ, թէ յանդիման ինքեան ըզցաւ դք կըրէր,
Ջանացեալ բարերարել ցըմուացումն իսկ անձին,
Չիմացաւ ըզկիրս երբեք նախանձոտին թանձրասիրտ,
Զոր այլոցն յաջողութիւն յանյուսուութիւն արկանէ:

Վերագոյն ամենայնի, ևս և իւրումն համբաւոյ,
Գիտէր նա ըզկշիռ և զյարգ ծըխոյն այնորիկ:
Յամենայն պատեհս առթից զիւրոց տաղիցըն խօսէր
Առանց խրտուութեան և մտացածին ինչ կարծեաց:
Էր ցածուն անկեղծաւոր, անմահ՝ յոր ոչ միտ դընէր:
Չըտարաւ դք անդրագոյն զարհամարհանքս փառաց,
Բոր ունէր իրաւունս, ըստանալով զայն լիով.
Համարեալ էր այն նըմա իբր աստղ 'ի մուտսըն թաւալ,
Պատրանք վաղանցուկ, պըսակ լուսոյ անկայուն,
Որ ըզհէք մահկանացուաց տածէ ըզսէր փառամոլ.
Ձայն հընչեալ միօրեայ, ձայն պակասեալ անդագար,
Եւ յարձագանգս յարձագանգաց անհետացեալ 'ի մուաց:

Ի ծայր ճանապարհին գոնեայ կարաց նա ասել.
Կեանք իմ կայ առաջի. ընդ ամենայնն անցանեմ,
Եւ ոչինչ զըտանեմ զոր ցուցանել մարթիցի
Իբրեւ գործ նուաստութեան կամ կամակոր չարութեան.
Ձիք տիղմ 'ի վաստակս իմ, ոչ նախատինք ամօթոյ.
Ոչ չար ինչ արարի, չանարգեցի ըզհանճար,
Ըզխոնարհս, ըզտառապեալս, ըզչարագէմս և ըզծերս:
Իրաւամբք կոչեցայ բարուց մարդկան յարդարիչ:
Ջանցեալն իմ աւանդեմ, ամենեքին քըննեսցեն:
Բարեկամ կենդանեաց և վարդապետ քաղցրութեան,
Զուղղութիւն քարոզեցի, զխաղաղութիւն և ըզգութ,
Եւ պահել ըզպատիւ մատենագրի գիտացի:
Չըտեսցէ դք երբեք ըզշունչ ազգման գիներբուաց
Ըզպարկեշտ իմ եղերերգս իւրով հըպմամբն արատեալ.
Եղէ խորհրդական ժողովըրդեան, և յիմ ձայն
Ուսաւ նա ըզպատիւ և զմեծարանս օրինաց:
Ինեւ բազմամբոյք 'ի լաւութիւն վարեցան.
Դրոշմեցի 'ի միտս իւրեանց վըսեմ իմաստըս միայն,
Ի սիրտըս զարթուցեալ զեռանդնալից ըզտենչանս՝
Որք աստէն 'ի յերկրի ըզմեծ ազինս յարդարեն:
Թէ, աւաղ, եղէ տըրտում, զի տըրտմութիւն է համայն
Յաշխարհիս ուր մարդիկ այդպէս երագ անցանեն.
Երանր է կեանքն ապաքէն, այլ ծանրագոյն ևս օրհաս.
Եւ երբ վաղ կամ անագան աւուրքս իցեն հոլովեալ,
Շատ իմն է՝ թէ կարիցէ դք վըկայել ինքն ինքեան
Թէ բարին զոր արար՝ կացցէ մնասցէ վայրկեանս ինչ.
Շատ իսկ մեծ՝ կարողանալ առանց խըղճի և անխէթ
Ձակն 'ի սիրտ իւր արկանել մինչ 'ի վայրկեանըն վերջին:

Եւ մեք կամք 'ի սահմանել, սակ արկանեմք զարձանէ

Առն այնմիկ, որ եկաց մեծ իբր ըզՍոփոկլ և զՀոմեր .
Եւ մինչ ըզկարծիկս աւուրց մերոց տեսանեմք
Ըզվէմս և ըզպըզինձս իւրեանց կանուխ ժառանգեալ,
Ընդ վայր աստուածազան պատուոյն մնայցէ Լամարդին:
Վարժապետըդ վեհագոյն յարձակն 'ի բան և 'ի տաղ,
Նորոգողդ ընտրական, որոյ բարբառ հոգեշունչ
Յաշխարհն արուեստի կենդանացոյց զամենայն .
Բայից կախարդիչ, դաշնակութեան վեհ ոգի,
Մարդարէ նկատեալ նախուստ, հանճար մըտաց գերագոյն,
Գեղեցիկ և մաքրագոյն քան զոր տեսան յըստորեւ,
Աւուրքս անփառունակք ոչ էին քեզ արժանիք:

ԹԱՐԳՄ. Հ. Ս. ԿԵՍԱՐԵԱՆ:

ԱՄԵՏԷ ԲՈՄԻԷ:

Մենամարտութիւն Լաշադէներէյի և Ժառնաքայ:

ԺՁդ դարը եղական կերպով մենամարտութեանց դարն եղաւ. կրօնական ատելութիւնք, Մետիչեանց ձեռքով Գաղղիոյ արքունիքը մտած՝ ազնուականութեան սովորութիւններն, ընկերական կապոյն թուլութիւնը, ամեն բան ձեռնտու եղաւ՝ անձնական զօրութիւնն ու ճարտարութիւնը ցուցնելու միջոցները բազմացնելու: Իւրաքանչիւր ոք ջանաց ինքնիրեն տէր ըլլալ ըստ իւր իրաւանցը կամ կրիցը:

Ձեացաւ ընկերութիւն մը սուսերամարտից, որոնք Մաքրափայլք կ'ըսուէին. մենամարտութիւնը՝ միակ օրէնք ազնուականաց կը քարոզէին, և կը հաստատէին որ քանի մը առիթներու մէջ կրնար մէկը ինչուան իր հօրը դէմ կըռուիլ: Պ. Սէն Լիւք օր մը սուրը քաշեց Պ. Սլանսօնին սենեակը, և երկու ուրիշ ազնուականներ նոյնպէս ըրին Հենրիկոս Գ^ն սենեակը, շատ գահերէցներու և արքունական խորհրդականաց ներկայութեամբ, որ դիպուածով հոն կը գտնուէին: Սակայն թագաւորը անիրաւ կը համարուէր եթէ այն բանին վրայ դժկամակեւել ըլլար, ինքը՝ որ երբեմն ուղեր էր ստիպել զերիտասարդ Նանսէյն, իրեն հետ մենամարտելու

քանի մը անխորհուրդ խօսքերու պատճառաւ, և այս այնչափ պնդութեամբ որ Նանսէյն ստիպուեցաւ արքունիքը թողուլ, մենամարտութենէն ազատելու համար: Սակայն այն մենամարտ կռիւներու մէջ որ նշանաւոր կ'ընեն այն խռովարկու դարը, կայ բոլոր մէկաշնոյցմէ աւելի երեւելի մը, հանդիսաւոր կերպով ըլլալուն, պատերազմողաց ճարտարութեան և հանդիպած առանձին հանգամանքներուն պատճառաւ:

Կ'ուզենք խօսիլ Ժառնաքայ իշխանին՝ Կիւյ Շապոյի մենամարտութեանը վրայ, փրանկիսկոս վիվոնի դէմ՝ որ աւելի ճանչցուած է Լաշադէներէյ անունամբ:

Երկուքն ալ Անկումա ծնած էին և մեծ պատիւ ունէին արքունիքը: Կերպով մը միատեղ մեծցած էին, և այնչափ ընտանութեամբ էին իրարու հետ, որ շատ անգամ գեղի ժամանակ նոյն անկողնի մէջ քուն կ'ըլլային:

Լաշադէներէյի անխոհեմ խօսք մը անհետացուց այս բարի միաբանութիւնը: Անխոհեմ կերպով մը ըսաւ թէ Ժառնաք պարծեր էր թէ իր սկեսուրն զինքը կը սիրէր. այս բանս բոլոր արքունիքը հուշակուեցաւ, և մինչև Ժառնաքին հօրը ականջն հասաւ: Ասիկայ տեղեկութիւն հարցուց իր որդւոյն, որ հաստատեց թէ Լաշադէներէյ իրմէն